ԳԵՏԱՇԷՆԸ ԴԻՄԱԴՐՈՒՄ Է...

Ապրիլի 30ին բոլոր կողմերից պաշարուած Գետաշէնը եւ Մարտունաշէնը ենթարկուել են ուժեղ գնդակոծման եւ հրետանակոծման ադրբեջանական ՕՄՕՆականների եւ ԽՍՀՄ ներքին զօրքերի կողմից, որոնք գիւղ են ներխուժել զրահամեքենաներով եւ հրասայլերով։

Ըստ վերջին տեղեկութիւնների, կան 27 զոհուածներ, այդ թւում՝ փոքրահասակ երեխաներ։ Ձերբակալուած են 30, վիրաւորուած՝ 75 մարդ։ Տների մեծ մասը աւերուած է ու հրկիզուած։ Գետաշէնում մարտերը շարունակւում են։ Պաշարուածներից ոչ ոք Շահումեան չի անցել։

Իսկ Մարտունաշէն գիւղից պաշարման գիծը անցել են 28 հոգի։ Ըստ նրանց, Մարտունաշէնն ունեցել է 9 զոհ, մէկ ծանր վիրաւոր։ Այլ տեղեկութիւններ չկան։

Ա.Մոսեան
«Ազատամարտ»ի թղթ.